1101/ 02787
23 -ը մարտի, 2015թ.
ԵՄ-ում ՀՀ ներկայացուցչություն/Բրյուսել
Հանձնարարական/ԾՕՀ

Տեղեկացնում ենք, որ ներկայումս ընթանում են Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո իրականացվող Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության ծրագրի 2014-2020թթ ռազմավարության և Համատեղ գործառնական ծրագրի նախագծերի շուրջ քննարկումներ՝ մասնակից երկրների, Եվրոպական հանձնաժողովի, ծրագրի կառավարող մարմնի /Ռումինիայի տարածքային զարգացման և հանրային կառավարման նախարարություն/ և այլ շահառուների միջև:

Ծրագրի նախորդ՝ 2007-2013թթ. շրջափուլի ընթացքում Ադրբեջանը հրաժարվել է ստորագրել Ծրագրի Ֆինանսավորման հանձնայնագիրը՝ առաջադրելով մասնակցության համար իր նախապայմանները, որոնք չեն ընդունվել եղել Եվրոպական հանձնաժողովի կողմից: Մասնավորապես, հիմնական նախապայման հանդիսացել է Ադրբեջանի այն պնդումը, որ Ծրագրային փաստաթղթում և հետագայում նաև Ֆինանսավորման համաձայնագրում ամրագրվի, որ Ադրբեջանի «օկուպացված տարածքները» չեն համարվում Ծրագրի շահառու տարածք: Համաձայնագրի չստորագրման արդյունքում՝ Ադրբեջանը չի մասնակցել Ծրագրի 2007-2013թթ.շրջափուլին:

Ադրբեջանական կողմը ծրագրի շրջանակներում տեղի ունեցող հանդիպումների ընթացքում, ինչպես նաև նամակագրության միջոցով պահանջում է ներկայումս շրջանառության մեջ դրված նոր՝ 2014-20թթ. համար ծրագրային փաստաթղթերի նախագծերում ավելացնել, որ "Ադրբեջանի «օկուպացված տարածքները» չեն համարվում Ծրագրի շահառու տարածք":

Կից ուղարկում ենք ս.թ. փետրվարին Քիշնևում կայացած հանդիպման արձանագրությունը և 2014-2020թթ ռազմավարության և Համատեղ գործառնական ծրագրի նախագծերը:

Խնդրում ենք հանդիպել Եվրոպական հանձնաժողովում Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության ծրագրի պատասխանատուներին և հայտնել, որ հայկական կողմը անընդունելի է համարում ծրագրի և դրա տեխնիկական փաստաթղթերի շրջանակներում միակողմանի ձևակերպումների առկայությանը՝ շեշտելով, որ նման ձևակերպումներ երբևէ տեղ չեն գտել Եվրոպական հանձնաժողովի պաշտոնական փաստաթղթերում:

Առդիր՝ 122 էջ /էլեկտրոնային/
Վերջ: